

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

27.05.2014

Սիրելի՛ հայրենակիցներ

Շնորհավորում եմ համահայկական տոնի ու նվիրական օրվա կապակցությամբ: Դարեր շարունակ չունենալով պետականություն և պայքարելով գոյի ու հայի կերպի պահպանման համար՝ հայ ժողովուրդը կնիքն է դրել իր արիականության, ոգեղենության և անկոտրում կամքի: Հպարտորեն ու արիաբար ելնելով այդ պայքարի բովից՝ 1918 թվականի մայիսի 28-ին հայ ժողովուրդը գծեց իր առաջին հանրապետության սահմանները: Առաջին հանրապետությունը հաջորդած երկրորդ և երրորդ հանրապետությունները ևս հանդիսացան ապացույցն ու վկան մեր աշխատասիրության, խաղաղարար ոգու և հայի տեսակի անմահության: Եվս մեկ անգամ շնորհավորում եմ: Եղեք տոկուն, հավատով լի: Թող ոգեղենությունը, պայքարի ու հաղթանակի լույսը միշտ ուղեկցեն Ձեզ՝ հանդիսանալով փարոս դարերում:

Ռուբիկ Աբրահամյան
ՀՀ Արարատի մարզպետ